ԱՐՄԱՎԻՐԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ-Ի ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՎԱՐԺԱՐԱՆ ՊՈԱԿ

« 02 » սեպտեմբերի 2014 թ. **ք. ԱՐՄԱՎԻՐ**

Հարգելի տնօրեն

«ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Արմավիրի**“ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ”**-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարան ՊՈԱԿ-ի կարիքների համար համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր **միջև կնքված N ՇՀԱՊՁԲ** շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Ապրանքների մատակարարման պայմաններն են՝ Վաճառողն ապրանքը հասցնում է Գնորդին /ք.Արմավիր Աբովյան 149 հասցեով /:

Հայտնում ենք , որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան 149 հասցեով, մինչև 2014 թ. **սեպտեմբերի 12–ը, ժամը 10:00-ն:**

Գնային առաջարկներ պարունակող ծրարները կբացվեն Ամավիրի **“ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ”**-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարան ՊՈԱԿ –ի վարչական շենքում ք.Արմավիր Աբովյան 149 **հասցեում 2014 թ. սեպտեմբերի 12-ին ժ. 10:00**-ին : Հայտը ներկայացվում է փակ՝ սոսնձված ծրարով, որի վրա կատարվում են գրառումները՝

ա/ **“ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ”** բառերը

բ/ ընթացակարգի ծածկագիրը,

գ/ **“ Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը ”**

դ/ մասնակցի անվանումը/անունը / , գտնվելու վայրը և հեռախոսահամարը

ե/ պատվիրատուի անվանումը/անունը/ , գտնվելու վայրը

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը **/Հավելված 1/** և գնային առաջարկը **/Հավելված 2/**:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Առդիր՝ 17 թերթ:

Հարգանքներով՝ ՏՆՕՐԵՆ՝ ԳՆԴԱՊԵՏ Կ.Լ.ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված 1

«ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10» **ծածկագրով**

ընթացակարգի հրավերի

«ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10» **ծածկագրով**

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է , որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

Արմավիրի **“ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ”**-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարան ՊՈԱԿ-ի կողմից

«ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով հայտարարված

ընթացակարգի _____ չափաբաժնին /չափաբաժիններին/ և հրավերի
Չափաբաժնի /չափաբաժինների/ համարը

/ծանուցման/ պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1/ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2/ համատեղ գործունեության կարգով մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված2

«ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի

«ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10» , ծածկագրով ընթացակարգ գնահատող

հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն

Գ ն ա յ ի ն ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգի հրավերը /ծանուցումը/, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

_____*-ն*

Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ միավորի գների՝

Չափա-բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Քանակը	Գնի առաջարկը /ՀՀ դրամով/		Գինը առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/	
			թվերով	տառերով	թվերով	տառերով
1	***Կոստյում բամբակյա, կեպիով (լրակազմ)***					
ա	*46/3 չափի*	*40 լկ*				
բ	*48/3 չափի*	*50 լկ*				
գ	*50/3 չափի*	*50 լկ*				
դ	*52/3 չափի*	*20 լկ*				
ե	*54/3 չափի*	*20 լկ*				
զ	*56/3 չափի*	*5 լկ*				
2	***Կոստյում՝ ձմեռային, արհեստական մորթե օձիքով(զինվորական)***					
ա	*46/3 չափի*	*40 լկ*				
բ	*48/3 չափի*	*50 լկ*				
գ	*50/3 չափի*	*50 լկ*				
դ	*52/3 չափի*	*20 լկ*				
ե	*54/3 չափի*	*20 լկ*				
զ	*56/3 չափի*	*5 լկ*				

3	***Գոտի լայն (զինվորական)***					
ա	1050 մմ չափսի	100 հատ				
բ	1150մմ չափսի	85 հատ				
4	***Գլխարկ ձմեռային(զինվորական)***					
ա	54 չափի	50 հատ				
բ	56 չափի	85հատ				
գ	58 չափի	50 հատ				

5	*Կիսաճտքավոր զինվորական կոշիկ*					
ա	37 չափի	5 զույգ				
բ	38 չափի	10 զույգ				
գ	39 չափի	10 զույգ				
դ	40 չափի	25 զույգ				
ե	41 չափի	50 զույգ				
զ	42 չափի	50 զույգ				
է	43 չափի	20զույգ				
ը	44 չափի	15 զույգ				
6	*Ներքնակ*	180 հատ				
7	*Բարձ*	180 հատ				

_____ _____

Մասնակցի անվանումը / անունը/, / ղեկավարի պաշտոնը,Անուն Ազգանունը/ /ստորագրությունը/

Կ. Տ.

_____2014թ

Նախագիծ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ԳՆՄԱ
N «ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10»

ք. Արմավիր **«-----» ---------- 2014թ.**

Արմավիրի **"ՏԻԳՐԱՆ ՄԵԾ "**-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարան ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Կ. Ղումաշյանի, որը գործում է վարժարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և _____ _____ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն _____ -ի (այսուհետև՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի հանդերձանքը (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.1.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ կմտնի և պայմանագրի շրջանակներում գնում կկատարվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագիր կնքելու միջոցով: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

1.2 Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից և շարունակվում է մինչ և 2013թ-ի հոկտեմբերի 1-ը ներառյալ:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին՝ ք.Արմավիր Աբովյան -149 հասցեով:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան :

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանադրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:: Նշված ժամկետում կտրոնները չիրացվելու դեպքում ողջամիտ ժամկետով երկարաձգել կտրոնների գործողության ժամկետը կամ հետ ընդունել կտրոնները և կատարել վերահաշվարկ:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման /կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ _____ _____ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր Ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի **N 2 հավելվածում:** Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ **N 2 հավելվածով**՝ վճարման ժամանակացույցով նախատեսված եռամսյակում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման–ընդունման արձանագրության /այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ/ Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ 0,05 տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի **N 1 հավելվածով** սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5%-ի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2013թ.:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Սույն պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները /խնայողություններ/ և /կամ/ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 /չորս/ էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2 և 3 հավելվածները՝ բաղկացած 13 /տասերեք/ թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**

Հավելված 1

«___» _____ 2014թ. կնքված **«ՏՄՀՎ-ՇՀԱՊԶԲ-11/10»**
Հանդերձանքի մատակարարման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագրերը և այլ պահանջներ
1	*Կոստյում բամբակյա,կեպիով (լրակազմ)*	***Կոստյում բամբակյա կեպիով*** **(լրակազմ)** Համազգեստը բաղկացած է բաճկոնից, տաբատից և կեպիից,գունաքողարկված կտորից (կամուֆլյաժ): **Բաճկոնը**/Հավելված 1/ միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով 5 օղակ կոճակներով, որից վերևից առաջինը կոճակը կոճկվում է բաց կոճկվածքով, իսկ 4 օղակ կոճակները գաղտնի կենտրոնական կոճկվածքով: Բաճկոնն ունի 5սմ լայնությամբ ծալովի ուղղանկյունաձև կանգունակով օձիք: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են վրադիր չորս գրպաններ՝ կափույրներով, որոնցից երկուսը կրծքամասում ծավալուն, իսկ երկուսը՝ կողային՝ վրադիր: Կրծքամասի գրպանի լայնությունը 14,5 սմ, երկարությունը 17,5 սմ: Առաջամասի կողային վրադիր գրպանների լայնությունը 17,5 սմ, երկարությունը 16,5 սմ, կափույրի լայնությունը 6 սմ: Գրպանները տեղադրված են բաճկոնի ներքին եզրից 3 սմ բարձրության և համապատասխանաբար, աջ և ձախ փեշերի ուղղահայաց եզրերից՝ 8սմ հեռավորության վրա:Առաջամասի գրպանները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 օղակ կոճակով:: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են, լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալներ: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Թևքերի ներքևի մասում մշակված են եռանկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են մեկ օղակով և երկու կոճակով: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: **Տաբատը**/Հավելված 2/ուղիղ ձևվածքով է, մշակված գոտիով: Գուլֆիկը գաղտնի կոճկվածքով՝ 3 օղակ կոճակով: Առաջամասում կողքից, թեք ներկարված գրպաններ: Գոտին մշակված է 7 կամրջակով և գոտու չափը կարգավորող ներկարված 2 ախլակներով: Կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով: Տաբատի փողքերի ներսամասում կարվում է կարգավորվող երկու կոճակ օղակներով փողքաժապավեն: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով: Համազգեստի կոճակները՝ 18մմ տրամագծի, պատրաստված ջերմակայուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկողմանի կարվող, գույնը՝ պաշտպանական: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: **Կեպին** /Հավելված 3/ աստառով է, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը մշակվում են սոսնձային կտորից միջադիրով: Հետնամասում, կեպիի չափը փոփոխելու համար մշակված է պաշտպանական գույնի պլաստմասե կարգավորիչ: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Հովհարին միջադրված է պլաստմասե միջադիր: Աստառի կողմից ճակատային մասին տեղադրված է 5.7X 4.5 սմ չափի արհեստական կաշվե կտոր: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է պիտակ, որի վրա պետք է նշված լինի չափերը:
2	Կոստյում ՝ձմեռային,արհեստական մորթե օձիքով(զինվորական)	Կոստյում ձմեռային,արհեստական մորթե օձիքով/զինվորական/: Ձմեռային կոստյումը մշակված է տաքացնող վատինե ներդիրով: Զարդակարի լայնությունը 0,6 սմ:Առաջամասերում, գոտկատեղից ներքև մշակված գրպաններ կափույրներով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0,6սմ կարի լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Կափույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով, 2 օղակ կոճակով: Բաճկոնն ունի ներկարված թևքեր: Բաճկոնի տաքացնող ներդիրը մորթե օձիքով է: Օձիքի մորթու արտիկուլը՝ Վ-73-074 (B704), գործվածքի 1մ^2 մակերեսային խտությունը 650 գրամ, խավի բարձրությունը՝ 12մմ-ից ոչ պակաս, գույնը՝ մոխրագույն: Օձիքի ձախ կողմից տեղադրված է օձիքաձիգ կտոր , որը կոճկվում է օղակ կոճակով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Ձախ առաջամասը վրադիր ծոցագրպանով է՝ կոճկված օղակ կոճակով: Բաճկոնի տաքացնող հանովի ներդիրը մգդակարված է 2 սմ հաստության վատինայով, կարվածքը շեղանկյուն, փախլավաձև կարերով: Ներդիրի երեսացուն, դեղնականաչավուն բիազից է: Բիազի 1մ^2 մակերեսային խտությունը՝ 140 գրամ, բաղադրությունը՝ 100% բամբակ: Տաքացնող հանովի ներդիրի և աստառի աջ կրծքամասում մշակված է շերտիկավոր ծոցագրպան, որը կոճկվում է մեկ օղակով և կոճակով: Տաքացնող հանովի ներդիրը բաճկոնին կոճկվում է 17 կոճակ օղակներով, 2-ը թևքերի եզրամասերից, 2-ը թևատակերից և 13 լանջափեշերից: Բաճկոնը

		գոտկատեղից կապվում է քուղով: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: /Հավելված 4/
3	Գոտի լայն (զինվորական)	Գոտի լայն Արտադրվում է տիսմայից, 5,5 սմ լայնությամբ, տիսմայի հաստությունը՝ 3,5 մմ: Պաշտպանական գույնի, երիզահանգույցը՝ մետաղյա ճարմանդով, մյուս ծայրին մետաղյա ամրակալ: Գոտին ամրակալի կողմից կարերով ֆիքսված, իսկ մետաղական ճարմանդը՝ մակօղակով, երկարությունը կարգավորելու համար:Գոտու ճարմանդի ամրացման ծայրում, ներսի կողմից պետք է ունենա կպչուն ժապավեն՝ 40 սմ երկարությամբ և 4սմ լայնքով: Գոտին պետք է լինի 2 չափսի՝ 1-ին չափսը 1050 մմ և 2-րդ չափսը 1150մմ երկարության: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը գործարանային, ստվարաթղթե արկղերով, արկղերը պիտակավորված, պիտակի վրա նշելով արտադրանքի անվանումը, արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, մատակարար կազմակերպության անունը, արտադրման տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: /Հավելված 5/
4	Գլխարկ ձմեռային(զինվորական)	Գլխարկ ձմեռային,զինվորական՝ արհեստական մորթուց , ականջակալներով, մոխրագույն, բաղկացած է թասակից, ականջակալներից և ճակատային մասից: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշան: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: /Հավելված 6/
5	Կիսաճտքավոր զինվորական կոշիկ	Կարված է սև, բնական կաշվից, միջադիրը՝ բիազ կամ համանման :Ունի 10 զույգ փոլակներով անցնող կապիչներ, վերին փափկացնող եզրակ, լեզվակ: Կաղապարված ներբանը ամրացված է մեխման եղանակով: Կոշիկը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: /Հավելված 7 /
6	Ներքնակ	Պատրաստի արտադրանքի չափսերը (185Х 65Х7,0) սմ, քաշը 7 կգ, մգդակված 45հատ(5x9), կտորե կոճակներով: Երեսացուն բամբակյա, գործվածքը (դիագանալ), համաձայն ԳՕՍՏ-ի, 1 մ² քաշը 240գ.: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի:Ներքնակը պետք է լցված լինի զգած բամբակով (առանց կտերի և կտերի մնացորդի՝ լինտ):Ներքնակի անկյուններց մեկում պետք է կարված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից:
7	Բարձ	Պատրաստի արտադրանքի չափսերը (55Х45) սմ, քաշը՝ 1.8 կգ, բարձը լցոնած բամբակով (լինտով), երեսացուն բամբակյա՝ համաձայն ԳՕՍՏ-ի, գործվածքը (դիագանալ), 1 մ² քաշը 240գ.: Բարձի անկյուններց մեկում պետք է կարված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից:

Ծանոթություն – մինչև մատակարարումը սկսելը հանդերձանքի նմուշները համաձայնեցվում են պատվիրատուի հետ :

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

Հավելված 1-1

Հավելված 1-2

Հավելված 1-3

Հավելված 1-4

Հավելված 1-5

Հավելված 1-6

Հավելվա ծ 1-7

Հավելված 2

«___» _____ 2014թ. կնքված N **«ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10»**

Հանդերձանքի մատակարարման պայմանագրի

Գնման և վճարման ժամանակացույց

N	Ապրանքի անվանումը	Չափի մավորը	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ	Գնումներն ըստ եռամսյակների		
					III Եռամս	IV Եռամս	Ընդամենը
1	*Կոստյում բամբակյա,կեպիով (լրակազմ)*	լկազմ	185		0	100%	100%
2	Կոստյում `ձմեռային, արհեստական մորթե օձիքով(զինվորական)	հատ	185		0	100%	100%
3	Գոտի լայն (զինվորական)	հատ	185		0	100%	100%
4	Գլխարկ ձմեռային (զինվորական)	հատ	185		0	100%	100%
5	Կիսաճտքավոր զինվորական կոշիկ	զույգ	185		0	100%	100%
6	Ներքնակ	հատ	185		0	100%	100%
7	Բարձ	հատ	185		0	100%	100%

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

Հավելված 3
«___» _____ 2014թ. կնքված N **«ՏՄՀՎ-ՇՀԱՊՁԲ-11/10»**
Հանդերձանքի մատակարարման պայմանագրի

Գնորդ	**Վաճառողող**
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
հվհհ_____	հվհհ_____

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N
___ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «_____» 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ ***«Ապրանքների»*** մատակարարման պայմանագիր:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «_____» 2014թ.
Պայմանագրի համարը՝ _____
Գնորդն՝ ի դեմս _____ և Վաճառողը՝ ի դեմս _____ _____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____ _____» 2013թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարումներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական հատկանիշին և գնման պայմանին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «_____» «_____» 2014թ–ից «_____» «_____» 2013թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները.

Մատակարարման համառոտ նկարագիրը	**Մատակարարարման քանակական ցուցանիշները**	**Մատակարարումների ժամկետը**	**Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)**	**Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)**
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ մատակարարված Ապրանքների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	**Ապրանքը ընդունեց**
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____
Կ Տ	Կ Տ